ԳՈՒՅԵ ՃԱՆԱՉՈ՞ՒՄ ԵՔ ՆՐԱՆՑ...

Պատմում է գերությունից վերադարձած հայը

Ալեքսանդր Մարտիրոսյանը այն հայորդիներից է, ովքեր ադրբեջանական տանջավայրերում դժոխային ամիսներ են անցկացրել, սեփական մաշկի վրա զգացել թուրքական վայրագության սարսափներն ու լկտիությունը, սակայն բարեբախտություն են ունեցել փրկվելու, հայրենիք վերադառնալու, անգամ շարունակելու ղարաբաղյան գոյամարտը:

Մեր թղթակից Վարդիթեր Հակոբյանը զրուցել է Ա. Մարտիրոսյանի հետ: Հրապարակվող նյութը գուցե օգնի ոմանց ճանաչելու իրենց գերված կամ անհետ կորած հարազատներին:

Ալեքսանդր Մարտիրոսյանի ծննդավայրը Հադրութի շրջանի Ջրաբերդ գյուղն է, սակայն ուսումը շարունակելու ձգտումը նրան հասցրել էր Սարատով, այնուհետև աշխատանքի էր նշանակվել Հեռավոր Արևելքում: 1988-ին լսելով Արցախում կատարվող իրադարձությունների մասին, վերադարձավ Հայաստան, իսկ 1989-ի հունվարին՝ Ստեփանակերտ: Էլեկտրատեխնիկական գործարանում երկու տարի աշխատելուց հետո, նա էլ արցախցի բոլոր տղամարդկանց նման, ստիպված եղավ զենք վերցնել: 1991-ին ծայր առած բռնարարքների օրերին նա հայրենի գյուղում էր՝ ծնողների կողքին: Գյուղի հայաթափումն ու փախստականի վիճակը երկար ժամանակ հոգեկան խիստ ընկճվածության պատճառ էին, մինչև որոշվեց զինված դիմադրություն կազմակերպել: Ամռանն արդեն այդ տարածքներն ազատագրված էին, սակայն սկսվել էր ամենակարևոր, բախտորոշ ճակատամարտը. հակամարտությունն իսկական պատերազմի էր վերածվել: Ա. Մարտիրոսյանը, որպես կամավոր մասնակցում էր Ջանգելանի կրակակետի ոչնչացմանը: Հենց այդտեղ էլ գերվել է՝ ներկայանալով որպես հայի և լեզգու խառնուրդ, որը փորձում էր փախչել Իրան, տեղափոխվել է Բաքվի մեկուսարաններից մեկը: Պատմում է ականատեսը՝

- Ճանապարհին անընդհատ ծեծում էին: Նույնիսկ փորձեցին ուղղաթիռում սպանել, օդաչուն ասաց. «Ուղղաթիռը հայի արյունով մի կեղտոտեք»: Հասցրին Բաքու՝ ադրբեջանական բանակի կենտրոնական շտաբ: Հարցաքննողները, չգիտես ինչու՞, չէին հավատում, որ հայ եմ, կարծում էին՝ հայի կերպարանքով օտարերկրյա հետախույզ եմ: Ցինվորական բարձր շրջանակներն էին ինձանով հետաքրքրվում, ուզում էին պարզել, թե ես՝ Ռուսաստանի քաղաքացիս, ի՞նչ գործ ունեմ Ղարաբաղում: Ես ասում էի ամբողջ ճշմարտությունը, չվախենալով, որ կարող են սպանել, որովհետև այդ վտանգը ոչ մի վայրկյան չէր նվազում: Բայց շուտով հասկացա, որ կյանքս կարող է երկարաձգվել՝ ինձ տեղափոխեցին Շուբանի զորամասի մեկուսարան: Հաջորդ օրը հանդիպեցի առաջին հայ բանտարկյալին՝ 26-ամյա ստեփանակերտցի Լյովա Դադայանին: Հարցաքննությունները շարունակվում էին ուղեկցվել դաժան ծեծով, լուտանքներով: Սխիթարվում էի հայկական հոգեւոր երգեր կատարելով: Դրանց մեղեդին ազդում էր ադրբեջանցի բանտապահների վրա, ոմանք նույնիսկ ասում էին՝ թարգմանիր. ի՞նչ ես երգում: 1994 թ. հունվարի մեկին բերեցին երկրորդ հային՝ Կիրովականցի Կարեն Ալոյանին: Նա գերի էր ընկել Ջանգելանի ճանապարհին: Կարենը ևս տանջանքների էր ենթարկվել: Լսեցինք, որ մեկուսարանում մեզնից գաղտնի պահվում է մարտունեցի Արսենը: Նրան ճանաչում էի ռազմադաշտից: Արսենին ինչ-որ նյութ էին սրսկել, որից նյարդային խանգարում էր ստացել: Այստեղ էր կալանված նաև Արշոն: Մահվան սպառնալիքը կախված էր յուրաքանչյուրիս գլխին, բայց հետո ինձ նորից տեղափոխեցին Բաքու, որտեղ հանդիպեցի հավատացյալ Արմեն Ամիրբեկյանին: Նրան պատանդ էին վերցրել Կիսլովոդսկ-Բաքու գնացքում, պատճառաբանելով, իբր փորձել է գնացքը պայթեցնել: Իրականում նա պայքարից հեռու մարդ էր, զենքը չէր էլ ճանաչում: Իսկ ինձ, Կարմիր խաչի ներկայացուցիչների միջնորդությամբ, տեղափոխեցին Բարդա, ապա Փայտիրավենդ, ուր փոխանակվեցի և վերադարձա Ստեփանակերտ՝ շարունակելու ազգային պայքարը: